

# ՍԱՂՄՈՍ 116

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Մահից փրկելու համար գոհություն	Մահից փրկելու համար գոհություն	Գոհություն բժշկության համար	Մահից փրկված ինչ-որ մեկը փառաբանում է Աստծուն	Գոհություն
<u>MT ներածություն</u> <u>Տկա</u>				
116:1-4	116:1-2  116:3-4	116:1-4	116:1-4	116:1-2  116:3-4ա  116:4բ
116:5-11	116:5-7  116:8-11	116:5-7	116:5-7	116:5-6  116:7-9  116:10-13
116:12-19	116:12-14  116:15  116:16-17  116:18-19բ  116:19գ	116:12-19	116:12-14  116:15-19բ	116:14  116:15  116:16-17  116:18-19
			116:19գ	

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

### ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 116:1-4**  
<sup>1</sup>Միրում եմ ՏԻՐՈՋԸ, քանի որ  
 Նա իմ ձայնն ու աղերսանքը լսեց:

**<sup>2</sup>Քանի որ Իր ականջն ինձ խոնարհեցրեց,  
Ուստի ամբողջ կյանքումս Նրան եմ կանչելու:  
<sup>3</sup>Մահվան վշտերն ինձ պատեցին,  
Ու դժոխքի ցավերն ինձ բռնեցին,  
Նեղություն ու դառնություն գտա:  
<sup>4</sup>Այնժամ ՏԻՐՈՋ անունը կանչեցի.  
«Աղաչում եմ, ո՛վ ՏԵՐ, փրկի՛ր իմ անձը»:**

**116:1-4** Այս Սաղմոսը գրվել է մահվան պայքարների մեջ գտնվող մի հավատարիմ հետևորդի կողմից (տես՝ Սաղմ. 116:3): Նա բացատրում է այս իրավիճակում ինչպես է իր միտքը աշխատում՝

1. հաստատություն՝ Ես սիրում եմ ՏԻՐՈՋԸ, BDB 12, KB 17, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ (տես՝ 2 Օրինաց 6:5, 30:6, Սաղմ. 31:23)
2. ինչու է նա սիրում ՅԱՀՎԵԻՆ  
ա. Նա լսում է իմ աղոթքները, BDB 1033, KB 1570, *Qal* ԱՆԿԱՏԱՐ  
բ. Իր ականջը ինձ խոնարհեցրեց (զուգահեռ է ա.կետին), BDB 639, KB 692, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ
3. արդյունքը՝ «Ամբողջ կյանքումս Նրան եմ կանչելու», BDB 894, KB 1128, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
4. սաղմոսերգուի իրավիճակը  
ա. մահվան վշտերը (տես՝ Սաղմ. 18:4-5) նրան են պատել, BDB 67, KB 79, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ  
բ. Դժոխքի վախերը/ցավերը (BDB 865 երկու անգամ, նեղության՝ տես Սաղմ. 118:5, Ողբ 1:3) բռնեցին (բառացի՝ «գտան», BDB 592, KB 619, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) նրան (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ)

5. եզրահանգում. Այնժամ ՏԻՐՈՋ անունը կանչեցի, BDB 894, KB 1128, *Qal* ԱՆԿԱՏԱՐ  
Նրա խոսքերն էին. «Աղաչում եմ, ո՛վ ՏԵՐ, փրկի՛ր իմ անձը», BDB 572, KB 589, *Piel* ՀՐԱՄԱ-ՅԱԿԱՆ:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒԼԸ»**

**116:3 «վախեր»** MT տալիս է «ցավեր» (BDB 865, KB 624), սակայն ոմանք առաջարկում են սա շտկել և դարձնել «որոգայթները» (KB 622), որն ավելի շատ է համապատասխանում «լարերը» զուգահեռականությանը, հ. 3ա:

1. վախեր, ԴՅՊ – BDB 865, KB 624
2. որոգայթներ, ԴԴՊ – KB 622

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 116:5-11**

**<sup>5</sup>Ողորմած ու արդար է ՏԵՐԸ, այո՛,  
Մեր Աստվածը գթառատ է:  
<sup>6</sup>ՏԵՐԸ պահում է միամիտներին .  
Անձս խոնարհվեց, բայց Նա ինձ օգնեց:  
<sup>7</sup>Ո՛վ իմ անձ, վերադարձի՛ր քո հանգստությանը,  
Քանի որ ՏԵՐԸ բարությանը վարվեց քեզ հետ:  
<sup>8</sup>Քանի որ Դու իմ անձը մահվանից փրկեցիր,  
Իմ աչքերն արցունքից ու իմ ոտքերը՝ սայթաքումից:  
<sup>9</sup>ՏԻՐՈՋ առջև քայլելու եմ ողջերի երկրում:  
<sup>10</sup>Հավատացի, դրա համար էլ խոսեցի.  
«Ես շատ չարչարվեցի»:  
<sup>11</sup>Իմ շփոթության մեջ ասացի.  
«Ամեն մարդ սուտ է»:**

**116:5-11** Սաղմոսերգուն աղոթելուց հետո խորհում է ՅԱՀՎԵԻ բնավորության վրա՝

1. գթառատ
2. արդար
3. ողորմած՝ կարեկից
4. պահպանում է միամիտներին (BDB 834, KB 989, ոչ փորձառու կամ միամիտ, սակայն խրատի համար բաց մարդը, տես՝ Սաղմ. 19:7):

ՅԱՀՎԵՆ ցույց է տալիս Իր բնավորությունը:

1. Նա ինձ փրկեց – BDB 446, KB 440, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, Սաղմ. 116:6բ
2. վերադարձրեց հանգստությանս – BDB 996, KB 1427, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (նա ինքն իրեն է խոսում՝ մտավոր ապահովության և անվտանգության վայրի մասին՝ ՅԱՀՎԵԻ մեջ), Սաղմ. 116:7ա
3. Նա բարությանը վարվեց նրա հետ (տես՝ Սաղմ. 13:6, 119:17, 142:7), Սաղմ. 116:7բ
4. Նա փրկեց իմ հոգին (այսինքն՝ *nephesh*, BDB 659) մահից – BDB 322, KB 321, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ, Սաղմ. 116:8ա, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. NEPHESH
5. Նա իմ աչքերը փրկեց արցունքից, Սաղմ. 116:8բ
6. Նա իմ ոտքերը փրկեց սայթաքումից, Սաղմ. 116:8գ (տես՝ Սաղմ. 56:13, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԱՀԵՏԸ, ՃԱՆԱՊԱՐՀԸ)

Սաղմոսերգուի պատասխանը՝

1. տես՝ #2 վերևում
2. ՏԻՐՈՋ առջև քայլելու եմ ողջերի երկրում (այսինքն՝ ՅԱՀՎԵՆ բժշկելու՝ փրկելու է նրան)
3. Սաղմ. 116:10-11 դժվար է մեկնաբանել համատեքստի ներսում: Հնարավոր է այն արտացոլում է՝
  - ա. ներկա պահի հավատքը
  - բ. անցած իրավիճակները (Պողոսը մեջբերում է Սաղմ. 116:11բ խոսքը Հռոմ. 3:4-ում):

Այս երկու համարները պետք է որ նկատի ունենան այն մարդկանց, ովքեր փնտրում են սաղմոսերգուի կյանքը: Եթե այդպես է, ուրեմն այս Սաղմոսի համատեքստը հիվանդությունը չէ, այլ դավաճանությունը (տես՝ Սաղմ. 116:11բ):

Սաղմ. 116:10-ի LXX թարգմանությունը կարելի է տեսնել 2 Կորնթ. 4:13-ում, սակայն MT անհայտ է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ

**116:6**

**NASB, NKJV, NRSV, NJB, JPSOA**  
**REB**  
**TEV**  
**LXX**  
**Peshitta**  
**NET**

«պարզամիտը»  
«պարզասիրտը»  
«անօգնականը»  
«մանուկները»  
«փոքրիկները»  
«անվարժները»

MT տալիս է ԱԾԱԿԱՆ (BDB 834, KB 984), որն ունի մի քանի իմաստ (սովորաբար բացասական), սակայն այստեղ դրական իմաստով է (այսինքն՝ #1):

1. բաց է խրատի համար (տես՝ Սաղմ. 19:7, 119:130, Առակ. 1:4)
2. հավատում են իրենց ասված ամեն ինչին (միամիտ են, տես՝ Առակ. 1:22, 14:15)
3. հեշտությամբ գայթակղվում են (տես՝ Առակ. 8:5, 9:16, 22:3):

**116:11** «**իմ շփոթության մեջ**» Սա *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ է (BDB 342, KB 339), որը մատնանշում է մտավոր վախի, տագնապի վիճակ (տես՝ Սաղմ. 31:22): Սաղմոս 116:7-ի «հանգստությունը» այս բառի ճիշտ հակառակն է:

❖ «ամեն մարդ սուտ է» Ինչպես «հանգստություն» բառը «շփոթություն» բառի հականիշն է, ստախոս մարդիկ էլ ՅԱՀՎԵԻ հակադարձն են (տես՝ Թվ.23:19ա, 1 Թագ. 15:29, Հռոմ. 3:4):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 116:12-19**  
**12** Ի՞նչ հատուցում պիտի անեմ ՏԻՐՈՉԸ՝  
Նրա՝ ինձ արած ամբողջ բարության փոխարեն:  
**13** Փրկության բաժակը պիտի վերցնեմ  
Ու ՏԻՐՈՉ անունը պիտի կանչեմ:  
**14** Ուխտերս ՏԻՐՈՉՆ եմ հատուցելու հիմա՝  
Իր ամբողջ ժողովրդի ներկայությամբ:  
**15** Պատվական է ՏԻՐՈՉ առջև Իր սրբերի մահը:  
**16** Ո՛վ ՏԵՐ, ճշմարտապես ես Քո ծառան եմ  
Ու Քո աղախնի որդին. Դո՛ւ իմ կապերն արձակեցիր:  
**17** Գոհության պատարագ եմ մատուցելու Քեզ  
Ու ՏԻՐՈՉՆ անունն եմ կանչելու:  
**18** Ուխտերս ՏԻՐՈՉՆ եմ հատուցելու  
Իր ամբողջ ժողովրդի ներկայությամբ,  
**19** ՏԻՐՈՉ տան սրահների մեջ, Քո մեջ,  
Ո՛վ Երուսաղեմ: Փառաբանեցե՛ք Աստծուն:

**116:12-19** Այս պարբերությունն ունի բոլոր ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ (բացառությամբ Սաղմ.116:16գ), որոնք մատնանշում են շարունակվող, անդադար գործունեություն: Սաղմոսերգուն բնութագրում է, թե ինչ է անելու տաճարում երկրպագության ժամանակ և կյանքում (տես՝ Սաղմ. 116:9), ՅԱՀՎԵԻ մեծ հոգածության և փրկության համար (տես՝ Սաղմ. 116:12):

1. փրկության բաժակը պիտի վերցնեմ, Սաղմ.116:13ա – AB (էջ՝ 149) ասում է, որ սա հանդիսանում է տաճարում գոհության պատարագ մատուցելու ծիսական մի մաս. այն մատնանշում է հեղում, և ոչ թե խմել (տես՝ NIDOTTE, հատոր՝ 2, էջ՝ 618, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳԱՎԱԹ)
2. ՏԻՐՈՉ անունը պիտի կանչեմ, Սաղմ.116:13բ, 17բ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»)
3. Ուխտերս ՏԻՐՈՉՆ եմ հատուցելու, Սաղմ. 116:14,18 (տես՝ Դևտացիների 27)
4. պատարագ եմ մատուցելու Քեզ, Սաղմ. 116:17 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՐԱԳ)
5. տաճարի մեջ եմ փառաբանելու ՅԱՀՎԵԻՆ, Սաղմ. 116:19 (տես՝ 116:14) – այս ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ հնարավոր է լինի Սաղմոս 117-ի մեկնարկը (LXX):

**116:15**

<b>NASB, NKJV, NRSV, LXX, Peshitta</b>	«պատվական»
<b>REB</b>	«պատվական բան»
<b>NJB</b>	«արժեքավոր»
<b>TEV</b>	«ինչքան ցավալի»
<b>JPSOA</b>	«վշտալի»

«Պատվական» ԱԾԱԿԱՆԸ (BDB 429) սովորաբար կիրառվում է արժեքավոր առարկաների համար: Այս համատեքստում այն մատնանշում է այն փաստը, որ ՅԱՀՎԵԻ խորապես հոգ է տանում, երբ Իր հավատարիմ հետևորդները երկրի վրա անցնում են փորձությունների և հիվանդության միջով (տես՝ Սաղմ.72:14): Նա տեղյակ է նրանց իրավիճակներից և անմիջապես գալիս է նրանց օգնության (տես՝ Ելից 3:7):

Անկում ապրած աշխարհում ոչ բոլոր հավատացյալներն են ֆիզիկապես փրկված: Ճգնաժամերը, խնդիրները և վախերը գալիս են: Անգամ, եթե մենք չենք տեսնում Աստծո ներկայությունը, Նա մեր հետ է և մեր կողմից: Մի օր մենք Նրա հետ ենք լինելու:

«Պատվական է ՏԻՐՈՋ առջև Իր սրբերի մահը»:

Խնդիրը «պատվական» բառի կիրառությունն է «մահ» բառի հետ: Անշուշտ սրբերի մահը պատվական չէ (այսինքն՝ արժեքավոր): Որոշ գիտնականներ փոխել են եբրայերեն «պատվական» բառի իմաստը (BDB 429) 7 և դարձրել «թանկագին» կամ «ցավալի»: ՅԱՀՎԵԻՆ վշտացնում է տեսնել Իր հավատարիմ հետևորդների չարչարանքը և մահը: Անկման սարսափելի հետևանքները երբեք էլ Նրա նպատակը չի եղել ստեղծագործության համար:

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

❖ «սրբեր» Տես Սաղմ. 16:10 և 30:4-ի առցանց գրառումները:

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍՐԲԵՐ

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍՈՒՐԲԸ, ՍՐԲԵՐԸ

**116:16** Ուշադրություն դարձրե՛ք, «Ես Քո ծառան եմ» կրկնվում է շեշտադրության համար: «Ծառա» տերմինը (BDB 713) ունի լայն ստուգաբանություն, սակայն այստեղ հավանաբար մատնանշում է «երկրպագուի» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ):

Հաջորդ տողը՝ «Քո աղախին որդին» նաև գտնվում է Սաղմ. 86:16-ում և մատնանշում է՝

1. արդար մայր
2. իսրայելացի մայր
3. խոնարհության դարձվածք
4. ծառա ընտանիք կամ հավատարիմ ծառայող ընտանիք

Սաղմոսերգուն այս ամփոփումը հիմնում է այն փաստի վրա, որ ՅԱՀՎԵՆ թուլացրել է (BDB 834, KB 986, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) իր կապերը (BDB 64), որոնք կարող են մատնանշել՝

1. փրկել է իրեն տերմինալ հիվանդությունից (ծանր վիճակներից կամ *Շեղից*)
2. փրկել է նրան թշնամիներից
3. փրկել է նրան բանտից կամ գերությունից
4. փրկել է նրան նեղությունից (տերմինը՝ BDB 865, «ծանր վիճակները» Սաղմ. 116:3-ում՝ երկու անգամ, կիրառվում է Սաղմ. 118:5 և Ողբ 1:3-ում «նեղության» համար):

Այս համարը պարզ արտահայտելու կերպերից մեկը կարող է լինել՝ «Ահա ես» կամ «Ես պատրաստ եմ ծառայելու»: ՅԱՀՎԵՆ փրկել է նրան, այժմ նա հոժարակամ և ամբողջությամբ ծառայում է Նրան (տես՝ Հռոմ. 12:1-2):

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Բացատրե՛ք այս Սաղմոսի հավանական կյանքի միջավայրը:
2. Արդյո՞ք անսովոր է, որ մահը և *Շեղը* անձնավորված են:
3. Թվարկե՛ք ՅԱՀՎԵԻ բնավորության գծերը:
4. Ինչո՞ւ է Սաղմ. 116:10-11 այդքան դժվար մեկնաբանել:
5. Ի՞նչ ՀԿ-յան նկարագրություն է ընկած Սաղմ. 116:6-ի հիմքում:
6. Թվարկե՛ք այն բառերը, արտահայտությունները, որոնք արտացոլում են տանարի երկրպագություն: